# ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆԴԷՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲՆԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՀՐՋԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ

Ա · ՏԱՐԻ · Ա · ՀՐՋԱՆ 1862 ԹԻՒ 11 · ՅՈՒԼԻՍ 5

Հրատարակի ամսոյ երկու անգամ.
Վեցամսեայ գինն է 8 ֆրանք.
Իզմիրէն դուրս ճամբու ծախքը միա-տեղ 9 ֆրանք.
Ստորագրութիւնները՝ հրջանին սկիզբէն կըսկսին.
Չ անգելիս ուղղուած անվճար նամակ կամ ծրար չընդունուիր.

Ստորագրութեան տեղերն են,
Իզմիր՝ Ֆուզիկի գրատնեակը, Կէ-րիթ խան, Թիւ 3.
Կ. Պոլիս, մեծարգոյ Խ. Թ. Գա-չնտերեանին սենեակը Պալըքի բազար կամուրջին գլուխը.

Հալէպ, մեծարգոյ Յ. Ս. Քիւրքճեա-նօֆ.
Փարիզ, M. A. Mourad, Rue du Dragon, 26.
Մանչեսթեր, D. Ekisler, George Street, 78.


## ԲԱՐՈՅԱԿԱՆ

### ԻՆՉ ԲԱՆԻ ՄԷՋ ՅԱՌԱՋ ԳԱՑԱԾ Է ՀԱՅ ԱԶԳԸ

Ազգ մը յառաջադէմ և լուսաւորեալ կը սե-պուի՝ երբ բարոյական, մտաւորական և ընական գաստիարակութիւնները (1) ըստ բաւականի տա-րածուած են իւր մէջը. երբ նոյն դաստիարակու-թիւնները հայթայթող միջոցներն ու վայրերը բազմաթիւ և բարեկարգ են։

Յառաջ դացած և լուսաւորեալ Ազգ մը ուսում-նասիրութեան, ազգասիրութեան և մարդասիրու-թեան մէջ երևելի է, որուն մի միջոցի մէջ հա-զարաւոր ուսումնական և բանասիրական թերթեր կը հրատարակէ, իւր ազգին օգտին և յառաջացման համար գիշեր ցերեկ կաշխատի, ընդհանուր մար-դութիւնը կրթութեան ասպարէզը մտցընելու հը-նարներ կը մտածէ, իւր հրաշալի մեքենաներովը աշխարհս կը դարձընէ, զմարդ թռչնոյ պէս օդոյն վերայ թռցընելով՝ մի տեղէ ուրիշ տեղ կը փոխա-դրէ, երկնից ընթացքը կը զննէ, երկրիս խորերը կը խառնէ, երկնային մարմնոց իրարմէ ունեցած հեռաւորութիւնը, անոնց յատկութիւնները և մեր հողագունդին վերայ ունեցած ազդեցութիւններին լաւ գիտէ, անմշակ տեղերը կը մշակէ, ամայի և անմարդի վայրերը կը շէնցընէ և մարդերով կը լեցընէ, ծովուն խորութիւնը և հարթութիւնը կը չափէ, ջրոյն վերայ շոգիով կը շարժի, երկու երեք օրուան հեռու բնակող անձի մը հետ վայրկենի մէջ քովէքով նստածի պէս կը խօսակցի։ Իրաւուն-քը կը ճանչէ, արժանաւորութիւնը կը վարձատրէ, Ազգին համար քրտինք թափողները կը քաջալերէ, անիրաւը կը պատժէ, և հասարակաց գործերու մէջ յանցաւոր մի՝ ով կուզէ թող ըլնի՝ հասարակաց թշնամի կը հռչակէ, մարդկային իրաւանց և պար-տուց վերայ հիմնեալ Սահմանադրական ուղիղ կա-նոններով և օրինօք կընթանայ։

Իսկ յառաջադիմութեան միջոցները՝ ազգօ-գուտ և բանասիրական հանդէսները, բարոյական և կրթական մատեանները և բարենպատակ ընկերու-թիւններն են։ Վայրերը բարեկարգ դպրոցները,

(1) Տես թիւ 2.

վարժարաններն , տպարաններն ու ազգասիրական ոգին տարածելու և հասարակաց կրթութեան համար կառուցեալ թատրոնները ։ Նա հոգին՝ ճշմարիտ ազգասիրութիւնն ու անշահախնդիր հայրենասիրութիւնն է ։

Արդ՝ բաղդատենք անգամ մի մեր Ազգը և տեսնենք թէ ինչ բանի մէջ յառաջ գացած է այն, և թէ մեր մէջն ալ Յառաջադիմութեան միջոցներն ու վայրերը բազմաթիւ և բարեկարգ են ։

Մեր Ազգը դեռ շատ բաներու կարօտութիւն ունի և ոչ թէ յառաջադէմ և լուսաւորեալ, հապա յառաջադիմութեան և լուսաւորութեան պողոտաներու մէջ անգամ մտած չսեպուիր ։ Իւր մէջը ոչ միջոցները շատ են և ոչ վայրերը . եպերելի անհոգութեան մի գերի եղած է , կարծես թէ ( ընդհանուրին է խօսքերնիս ) ։

Ազգին մէջ պէտք եղածին չափ պարբերական հանդէսներ կը պակսին , չունինք ամեն տեսակ օգուտ մատակարարող օրագիրներ ։ Որչափ հանդէս կը տպուի մեր մէջ ! — խիստ քիչ ։ Եղածներն ալ բռնութեան , տգիտութեան և հակառակութեան զոհ կըլլին . . . և ատենօք յարգի Գրագետի մը ըսածին պէս ապրիլ մայիսի ծաղիկին կը նմանին , ծնելնին ու մեռնելնին մէկ կըլլի՝ բաժանորդներէ ստակ չառնելու ախտին բռնուելով ։ Ի՞նչ է ասոր պատճառը . — Դեռ լուսաւորեալ չըլլալնիս է , դեռ ճշմարիտ յառաջադիմութեան ինչ ըլլալը չճանչնալնիս է , դեռ ընթերցանութեան սէր և կրթութեան փափաք չունենալնիս է ։

Ազգերնուս մէջ, գոհութիւն Ամենակարողին , կը գտնուին քիչ շատ ուսումնականներ , բազմաթիւ հանդէսներ հրատարակելու կարող անձեր , այո՛ կան . բայց ուսման և ընթերցման սէր չկայ Հանրութեան մէջ ։ Ըսենք և դարձեալ կըսենք եթէ ընթերցասիրութիւն ունենայ Հայը, որուն կը բաղձան ամեն ազգասէրք , այն ժամանակ միայն յոյս կայ իւր յառաջադիմութեան 'ի կրթութիւնս և 'ի գիտութիւնս ։

Կրթութեան , գիտութեան և բարոյականութեան վերաբերեալ քանի՛ գիրք . — Հինգ միլիոն ազգի մը համար գրեթէ ոչինչ են ունեցածնիս (1) ։

Որչափ բարեկիրթ կիներ ունինք մեր Ազգին մէջ . առաքինութեան և բարոյականութեան ճշմարիտ և կենդանի պատկեր եղող համեստուհի կանայք և օրիորդք քանի՛ հատ կան մեր մէջ . . . ։ Թո՛ղ ընթերցողը պատասխանէ այս հարցման , իւր ազգին իգական սեռը նկատելով ։

Ազգի մը կղերական դասը բարեկիրթ , ծանրակաց , ազնուաբարոյ և ուսեալ ըլլիլ պարտ է , մինչդեռ մեր եկեղեցականները , 'ի բաց առեալ խիստ սակաւաթիւ մասը , անկիրթ , անուս , և իրենց սրբազան պաշտօնին անարժան են . այո՛, ցաւալի ճշմարտութիւն է այս . բայց գիտնալը և անոր առջևը առնուլը հարկաւոր և ազգային վարչութեան անհրաժեշտ պարտաւորութիւնն է ։ —

Բարեկարգ միաբանութեանց ալ կարօտ է Ազգերնիս , բայց ոչ Երուսաղէմի Ս. Յակոբայ վանուց և ոչ ալ Մխիթարեան կրօնաւորաց Միաբանութեանց պէս , ոչ , անոնք իրենցմէ յուսացուած օգուտն ու բարիքը չմատակարարած են և չեն մատակարարեր ։

Մխիթարեան Միաբանութիւնը եթէ Լոյոլեան ազգավնաս ոգին հեռացընէ իւր մէջէն՝ այն ժամանակ միայն կօգնէ Ազգին , ինչպէս որ օգնած է երբեմն ։

Երուսաղէմի Միաբանութիւնը ևս (ինչպէս նաև բոլոր ուրիշ վանքերու Միաբանութիւնները ) ազգօգուտ գործ մի կատարելէ հեռի մնացած է դժբաղդաբար ։

Բոլոր վանքերը անհոգարան կամ ծուլարան են դարձեր , և մէջի կրօնաւոր ըսուածները անհոգութեան և ծուլութեան մէյմէկ կենդանի նկարներ եղած՝ միմիայն ժողովրդեան ստակ կթելու ետեւէ ըլլալէ ուրիշ բան չունին . . . ։

Ազգը այս միաբաններէն շատ բաներ կը յուսար ։

Ապահով ենք որ յետ այսօրիկ Միաբանութիւնը ( Երուսաղէմի ) իւր վաղեմի ապօրինաւոր ընթացքը կը փոխէ , և ըստ Սահմանադրական տրամադրութեանց՝ Ազգին ստակը՝ յօգուտ Ազգին կը գործածէ , և Ազգին առաքինի և սրբակրօն եկեղեցականներ կը հասցընէ , մանաւանդ դպրոցներ հաստատելով և այլն . . . Ինչե՞ր չեն ըլլիր իւր ձեռքը գտնուած ստակովը . . . (1) ։

Կանոնաւոր Միաբանութիւններ չունենալէ զատ՝ տեսակ տեսակ ազգօգուտ և բարենպատակ ընկերութիւններէ ևս զուրկ ենք ։

Ի մասին դպրոցներու՝ շիտակը խօսելու համար բարեկարգ և օրինաւոր վարչութիւն ունեցող վար-

(1) Այս ըսելով չենք ուզեր սա՛ ոչինչ համարել այն պատուական գրքերը , թարգմանութիւնները և այլն , որոնք բազմօգուտ ազգասէր անձանց և ընկերութեանց գործերն են , ոչ քաւ լիցի . այլ կը փափաքինք որ այս տեսակ գրուածները աւելի բազմանան ։

(1) Երուսաղէմի անցից վերայ ընդարձակ տեղեկութիւն ուզողը՝ Նիւրոգի Ալէտրեօ Երուսաղէմ բոււած պատմական հեղինակութիւնը առջեւ անցընելու կը հրաւիրենք ։

մըռաս, հետը հակառակութիւն ընես, և այլն, այն ժամանակ կըսկսի նա մոլիկ չըներ, ատել քեզի և պաշտօնին անմատդիր ըլնիլ, և այլն։

6. Սպասաւորները պէտք չէ սաստկապէս նեղել։

7. Միշտ միտքդ բերելով՝ որ սպասաւորներն ալ քեզի պէս մարդիկ են, պէտք չես անոնց երեսը ծուռ ծուռ նայիլ և անոնց հետ խօսիլը անպատուութիւն սեպել։

8. Սպասաւորը՝ յանցանքի կամ մոլութեան մի համար յանդիմանողը, նայելու է որ նոյն յանցանքը կամ նոյն մոլութիւնը ինքն ալ չունենայ։

9. Նայէ որ բարեսիրտ ըլնիս, առանց թուլութեան և տկարութեան մէջ իյնալու։

10. Պէտք է սպասաւորին տարեկանը կամ ամսականը 'ի ժամանակին վճարել, անոր պիտոյքը հոգալ, անոր հանդիպած փորձութեան ցաւակից ըլնիլ, անոր անուշութեամբ խրատ տալ, անոր սխալմունքը՝ մարդու առջև երեսը չտալ, անոր վըրայ իշխանութիւն ունենալդ քաղցրութեամբ ցուցել։

11. Սպասաւորաց հետ՝ ո՛չ չափազանց ընտանութիւն ընել պէտք է և ո՛չ ալ վերջին աստիճանի խստութեամբ վարուիլ։

12. Ընհաւատարիմ և իր գործին անփոյթ եղող սպասաւորին խստութիւն բանեցուր։

13. Կռուարար, խռովարար, ստախօս, գող և ուրիշ պակասութեան տէր եղող սպասաւորները տունդ մի առնուր։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՄԱՐԻԱՄ ՍԹՈՒԱՐԹԵԱՆ ԹԱԳՈՒՀԻԻՆ ՑԱՒԱԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Մարիամ Սթուարթեան Յակոբ Ե. Սկովտիոյ թագաւորին (1) միակ աղջիկն էր։ Ու՛թն օրուան էր երբոր իր հայրը մեռաւ, որով թագաւորութիւնը իրեն անցաւ յամին 1542։ Հազար հինգ հարիւր յիսունը ութին Ֆրանսայի Ֆրանսուա թագաւորին հետ պսակուեցաւ։ Դժբաղդաբար երկու տարիէն ետքը իր այրը կորսնցուց, և որբ և այրի մնալով՝ մեկնեցաւ Ֆռանսայէն և իր հայրենի երկիրը Սկովտիա գնաց. այնտեղ ալ մէկու մը հետ պսակուելով՝ նորէն թագուհի եղաւ Սկովտիոյ, այս նոր երկին ալ սպաննեցին։

Մարիամ տասնևութը տարի ևս ձախորդութիւն քաշելէն ետքը՝ ստիպուեցաւ Անկլիա փախչիլ։

Այն ժամանակ Անկլիոյ վրայ կիշխէր Եղիսաբէթ թագուհին, ասիկայ մեծաւ յարգանօք և պատուով ընդունեց զՄարիամ։ "Բայց, ըսաւ անոր, որովհետև ամեն մարդ կըսէ թէ՝ դուն սպաննել տուիր քու ընկերդ, պէտք է որ անմեղութիւնդ ցոյց տաս և քու անձդ արդարացընես"։ Եւ այս բանը քննելու համար յատկապէս դատաւորներ դրաւ, և զՄարիամը բանտարկեց։

Մարիամ թագուհւոյն բարեկամները, որոնք բազմաթիւ էին, միշտ բանտը անոր տեսութեան կերթային, այս բարեկամներուն երթևեկութիւնը նորէն ձախորդութիւն բերաւ թագուհիին գլխոյն։ Ժողովրդեան մէջ ձայն մի ելաւ թէ՝ այն բարեկամները Հռովմի, Սպանիոյ, Ֆռանսայի և Ճիզվիթներուն (Յիսուսեանց) կողմանէ սիրտ առնելով՝ ծածուկ խօսք ըրած են միաբանութեամբ Եղիսաբեթ թագուհին սպաննելու և Մարիամ թագուհին անոր տեղ նստեցընելու։

Հինգ հոգի ևս գտնուեցան որոնք երդմամբ խօսք տուած են եղեր Եղիսաբէթ թագուհին մեռցընելու համար, ասոնց առ Մարիամ թագուհին գրած մէկ քանի թղթերը ձեռք անցան. այս հինգ հոգին իրենց երկու ուրիշ ընկերներովը բռնուելով՝ սպաննուեցան։

Ասոնց սպանութենէն ետքը՝ զՄարիամ ալ մեռցընելու փութացին, կարծելով որ անիկայ ալ անոնց համամիտ է։ Ֆռանսայի և Սկովտիոյ դեսպանները շատ աղաչեցին և աշխատեցան զանի ազատելու, բայց 'ի զո՛ւր։

Լսեցին Սկովտացիք իրենց թագուհւոյն վըտանգաւոր կացութիւնը, զայրացան, և զանի նոյն վտանգէն խալըսելու համար Անկլիոյ վրայ զօրք հանեցին։ Սպանիացիք ալ մեծ նաւատորմղի մը պատրաստութիւն տեսան, և անունը դրին Անյաղթելի, քանզի այն ժամանակները այնպիսի նաւատորմիղ մի տեսնուած չէր։

[illegible]

## ԱՅՍ ՄԵՐ ՊԱՐԾԱՆՔ ԵՒ ՅՈՅՍ

Որչափ Հայեր դեռ պարծենան
Թէ ատենօք պերճ Հայաստան
Իր մէջն ունէր դիւցազուններ,
Արշակեաններ և Տիգրաններ։

Թէ Հայաստան անթիւ քաջեր

(1) Սկովտիա յառաջ զատ թագաւորութիւն էր. բայց հիմա Անկլիոյ միացած է։

աշակերտուհիներէն :

Սրբազան Հայր, և Մեծարոյ Հանդիսականք,

Միթէ բերկրալի տաւօտ և ցանկալի օր չի՞ համարուի՞ այսօր վարժարանիս աշակերտուհեաց համար, ո՛վ մեծարգոյ հանդիսականք, արդարև պայծառ և երջանիկ օր՝ միմիայն ճշմարիտ ազգասիրի մը համար սահմանուած, յորում մեր երախտագէտ սրտից դռները բանալով Աստուծոյ առջև կը պարտաւորինք զինքը օրհնել և փառաւորել որ այսպիսի օրհնեալ և նուիրական օր մը տեսնելու և հոգւովք զմայլելու արժանի ըրեր է զմեզ : Գոհութիւն ծնրադրական իւր անճառելի մարդասիրութեան, փառք իւր անսպառելի Աստուածային գթութեան․ Ի՞նչ են այս շքեղ հանդէսները, ի՞նչ են այս օրիորդաց քաղցրանուագ երգերը, որոնք կը պայծառացընեն այսօր վարժարանս, ի՞նչու շքեղ փառաւորութիւն մը զգեցեր է այսօր այս նուիրական տաճարը, ի՞նչու առ հասարակ ամէնուս դիմաց վրայ ուրախութեան լոյս կը շողայ, այո, յանուն սրբոյ կուսին Հռիփսիմեայ կառուցուած այս բարոյական բուրաստանիս տարեկան հանդէսը կատարելու համար խմբուած ենք այսօր, այս պատկառելի ակումբին առջև կը ներկայի ահաւասիկ սրահիս ճակատը այնպիսի առաքինազարդ կուսի մը պատկերը՝ որուն վրայ համեստութիւնը հրաշապէս փայլելով՝ իւր չնաշխարհիկ վարուց վրայ քանի մը վայրկեան խորհելու կը պարտաւորէ զմեզ․ Երանի՜ անոր և բիւրիցս երանի, որ իւր անմահ փեսային ողջակէզ մատոյց իւր անձը, երջանիկ է այն հիմա երկնային փառաց մէջ և երանելի յոյժ երկրիս վրայ․ Հռիփսիմէ հրաշագեղ կոյսն էր այն, որգեսէր ծնողք, որուն համեստութիւնը, պարկեշտութիւնը և առաքինական վեհ սկզբունքները գերազանցելով իւր սուրբ ընկերակիցները հրաշացուց զՀռովմ և զՀայաստան, ան երանելի կոյսն է, որ իր կուսութիւնը անբիծ և անարատ պահեց, ան կոյսը՝ որ աւելի լաւ համարեց 'ի սէր Քրիստոսի իր արիւնը թափել, քանթէ այս աշխարհիս վաղանցուկ փառքերը վայելել, զոհարեզէն թագերը, ծիրանազգեստ հանդերձները և անգին նուէրները արհամարհելի թուեցան անոր աչքին և անիկայ արդարութեան ձիւնափայլ զգեստին փափաքեցաւ միայն, իր ընկերներովը Հայաստան փախած՝ այրի մը մէջ սրբութեամբ կեանք անցուց, ան կոյսը՝ որ բարձր և իշխանազուն դերդաստանի կը վերաբերէր, և իւր մանկութեան ժամանակէն փափուկ հանդերձներու ու հոյակապ պալատներու մէջ սնած ու մեծցած էր, առ սէր Յիսուսի անշուք խրճիթները և գետնախշտի տեղերը ընտրեց, և միայն ծարաւի եղջերուի նման իւր անմահ փեսային փափաքեցաւ․ քաջայոյս եղած՝ որ իւր առաքինութեանց փոխարէն անոր ձեռօք պիտի բոլորուէր իւր գլուխը՝ անթառամ պսակը, անիկայ բռնութեամբ Տրդատ ահեղ թագաւորին առջևը բերուեցաւ որուն հետ պատերազմելով՝ Հոգւոյն Սրբոյ զօրութեամբը զայն օրուան մը ծնած մանուկի պէս գետին կործանեց․ չզարհուրեցաւ և չթուլցաւ երբէք թագաւորին տուած ահարկու ըսպառնալիքներէն, սիրով և համբերութեամբ տարաւ ամէն տեսակ չարչարանքներու և վերջապէս իւր սուրբ հոգին աւանդեց Քրիստոսի ձեռքը և անթառամ պսակին արժանի եղաւ :

Երանի՜ իրեն և երանի իւր սուրբ ընկերակիցներուն : Արդ մենք ալ կը խնդրեմք Ձեզմէ որ օրհնէք զմեզ այսօր, ո՛վ սուրբ Հռիփսիմեան կուսանք, մենք՝ որ այսօր ձեր անուան յիշատակը կը տօնենք ու կը փառաւորեմք, զօրացուցէք վարժարանիս Բարերարները, ազգասէր Տեարքը և Ուսումնական Խորհրդոյ բարեջան անդամները և դասատուները, հաստատեցէք մեր դիւրագայթ ոտքերը դէպի ուսման ասպարէզին մէջ, աղաչեցէք զՔրիստոս որ մեզի ալ՝ հաղորդակից ընէ իւր անհուն շնորհաց որպէս զի մենք ալ Ձեր չնաշխարհիկ վարուց նմանող ըլլանք, ձեր ոգին, ձեր առաքինութիւնը և ձեր զգաստութիւնը ունենանք և 'ի վերջոյ արժանի ըլլանք ձեզի հետ փառակից և պսակակից ըլլալու :

Հռիփսիմէ Տ[illegible]բեան :

## Ի ՍՈՒՐԲՆ ՀՌԻՓՍԻՄԷ

Պայծառ արեգ ծագեց այն ինչ
Պատեց զաշխարհս ցընծութիւն ինչ,
Երկինք երկիր զուարթերես
Աւետիս մեզ կարդան զոգցես :
Քանզի ինչո՞ւ այսչափ հրճուանք
Սրտերնուս մէջ այսօր կըզգանք,
Հռիփսիմեան սուրբ կուսանաց
Կը կատարեմք զհանդէս փառաց :
Հռիփսիմէ՛ն այն չքնաղ կոյս
Տածէր սրտին մէջ հաստատ յոյս,
Համեստ վարուքն առաքինի
Յաղթեց կամաց սատանայի :
Այն Տրդատէս հսկայն արի

խաղալ է, ո՛չ սահմանեալ սակի զուարով, և այսպիսի անձերը խաղամոլ (խումարպազ) կոչելու չենք դանդաղիր։

Իսկ այն ունեւոր անձինքը՝ որոնք զուարճանալու համար քիչ սակով խաղ կը խաղան և՛ի ժամանակին աչալուրջ են բաներնին գործերնին նայելու և կարգի դնելու, ահա այսպիսեաց ընթացքը մենք պախարակելի չենք գտներ, և այսպիսի անձերը չենք կրնար համարձակ Գէշ մորթին էն, ըսել, ՚առանց ուղիղ դատողութեան դէմ մեղանչելու։

Սակով խաղ խաղցողներու մէջ գէշ մարդիկ չկան՝ չենք ըսեր, և ո՛չ ալ առանց բացառութեան ամենն ալ գէշ մարդեր են կըսենք.....։

Այլ եւ այլ Խորհրդածութիւններ.

Շիտակը մեծ թշուառութիւն է՝ գեղեցկապէս խօսելու համար բաւական խելք և լռելու համար բաւական դատողութիւն չունենալը։

Համեստ մարդ մը՝ որուն խօսքերը այո՛ այո՛ է և ո՛չ ո՛չ, արժանի է ամենուն հաւատալի ըլլալու. իր բնաւորութիւնը իրեն համար կերդնու, իր խօսքերը զինքը հաւանական կընեն և ամեն կերպ վստահութիւն յինքն կը քաշէ այսպիսի անձ մը։

Մարդուս համար երեք դիպուածներ կան, ծնանիլ, ապրիլ, և մեռնիլ. ծնանիլը չզգար մարդ, մեռնելու համար նեղութիւն կը քաշէ և ապրիլը կը մոռնայ։

Յոռի մարդ մը՝ մեծ մարդ չկրնար ըլլիլ.

Լա Պրիւյէր.

Մեծ խորհրդածութիւնները սրտէ կը բղխին։

Ստրկութիւնը՝ զինքը սիրցընելու չափ կը նըւաստացնէ զմարդիկ։

Մարդասիրութիւն չունեցողը արդար չկրնար ըլլիլ։

Հարստութիւնը սուտ կըլլի՝ երբոր զայն վայելելը չգիտցուի։

Մեռնելու հարկաւորութիւնը՝ (nécessité) մեր տրտմութիւններուն ամենադառն է։

Վօլթէր. —

Գոռում գոչումներու և խառնաշփոթութեանց մէջ ապրիլը՝ շուտով ապրիլ է, հանդարտութիւնը կեանքը կերկարէ։

Աշխարհս՝ իրենք իրենցմէ փախչողներու խումբ մը է։

Տիկին Տը Լամպէր.

Մեր ազգին, ինչպէս հոգևոր և աշխարհական մարմին, երկու էական բան պէտք են. Գիտութիւն և Օրէնք. Գիտութիւն մեր միտքը լուսաւորելու, մեր պարտքը ճանչելու, մեր մարդկութեան նպատակին համեմատ ընթացք ունենալու, մեր մտաւոր կարողութիւնները ազնուացընելու, մեր զգալոյ, խորհելոյ, ընտրելոյ, դատելոյ և կամելոյ կարողութիւններն զարգացնելոյ, աստուածպաշտութեամբ և մարդավարութեամբ կենցաղավարելոյ համար. և Օրէնք մեր պարտքը կատարելոյ, ազգային մարմնոյ այլ և այլ անդամոց առ միմեանս ունեցած յարաբերութիւնները կանոնաւորելոյ, հասարակաց և անհատի ստացուածքը, իրաւունքը և իրիշխը ապահովելոյ, ընդհանուր և մասնաւոր իրողութեանց կարգաւոր ընթացք տալոյ; մեր կիրքը սանձելոյ, տկարը զօրաւորին դէմ, անմեղը անզգամին դէմ պաշտպանելոյ, որով և ազգի լրութիւնը զօրացունելոյ համար։

Կ. Մ. Շահնազարեան.
Փարիզ Լոռանգէրին 70րդ Բաղոյն մէջ։

Գարնան Հայաստանի 9դ թուոյն մէջ Մէճմուայը Հավատիս Լրագրոյն Գործակալութեան փոխուելուն վրայ խօսեցածնիս՝ թիւրիմացութեամբ չար մտօք գրուած կարծուելուն համար, կը փութանք իմացընել որ բոլորովին բարեմտութեամբ էր այն։ Պատուոյ դպչիլ չենք ուզեր մենք։

# ԱԶԴ

Անձնական տկարութեան պատճառաւ սոյն այս թիւը ակամայ ուշացընելու ստիպուեցանք։

# ՎՐԻՊԱԿ

Նախընթաց թուոյն 75դ երեսին առաջին էջին 28 և 29դ տողերուն մէջ տեղը պիտի մտնէ հետագայ տողը.

"Առանց բարեացս անցուցած է և ո՛չ մէկ օր,

ՇԱՐԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ
ԳՐ. Գ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ

ԶՄԻՒՌՆԻԱ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՏԷՏԷԵԱՆ